

«Պարսկաստանի Հայերը» Նազար Յ. Գորոյեանց: Տպ. Մոսկոն, 1968, 368 էջ:

1968 թուի վերջաւորութեան, Մոզերն տպարանից լոյս տեսաւ Հանդուցեալ բա՛նասէր Նազար Յ. Գորոյեանցի «Պարսկաստանի Հայերը» աշխատութիւնը:

Գիրքը տպագրուել է Պրն. Արզուման Աւետիսեանի նիւթական միջոցներով, «Մոզերն» տպարանի տէր ու անօրէն եւ ուսուցիչ մտաւորական Պ. Տաճատ Պօղոսեանի խմբագրութեամբ:

Ունի 366 էջ, 16×21.5 սմ. ծաւալ, թղթ-թաղանթ, մաշուր տպագրութիւն եւ համեմատաբար մատչելի արժէք՝ 100 ռիալ:

Գրքի սկզբում գրուած է Հեղինակի լուսանկարը, բովանդակութեան ցանկը, օգտագործուած գրականութիւնը, աշխատասիրողի յառաջարանն ու ներածականը, ինչպէս եւ խմբագրողի կողմից գրի առնուած Գորոյեանի կենսագրութիւնն ու երկու խօսքը:

Պ. Պօղոսեանը իր երկու խօսքի մէջ, կարելի է տեսլ մօտաւոր ձեւով գրախօսում է գիրքը եւ պարզում այն Հանդամանքներն ու յայտարարութեան յանձնելու միջոցները, ըստ որի աշխատասիրութիւնը իր ժամանակին՝ 1901 թ., արժանացել է ՎՅ. Իզմիրեանի մրցանակի, յայտ նրա գտնոր՝ Տէն. Փառանձմի Բէյերեանի կողմից ապահով ձեւով պահուել է շուրջ եօթանասուն տարի եւ հաջիւ արժէք յանձնուել է տպագրութեան:

Ինչպէս աշխատութեան վերնադիրն է ցոյց տալիս, գիրքը նուիրուած է Պարսկահայութեան եւ բաժանուած է այն օրերի երկու գլխաւոր՝ Ատրպատականի եւ Սպահանի (Իրան-Հնդկաստանի) թեմերին ու շրջաններին, ուր, մի շարք ստորաբաժանումներով, նկարագրուած է Հայ ժողովրդի Իրանում ունեցած ամբողջական դրութիւնը, սկսեալ առաջին դարից օրերից մինչեւ 20-րդ դարը, իր գիւղ ու քաղաքով եւ իր անցեալ ու ներկայ (այն օրերի) ընդհանուր միճակով:

Գիրքը թէեւ մանրամասնութեամբ չէ որ նկարագրում է Հայութեան պատմական անցեալը, բայց այսուհանդերձ, ունի հետաքրքիր եւ ամբողջական տեղեկութիւններ Համայն Իրանահայութեան մասին:

Դէպքերին եւ դէմքերին վերաբերող լուսաբանութիւններ կան, տրուած թէ՛ հեղիւնոր-ձուլալ

նակի եւ թէ խմբագրողի կողմից՝ կան նաեւ պատմական դէպքերին ակնատեսներին կամ այլ պատմաբաններից մէջներումներ, որոնց մի մասը դժբախտաբար կրճատուել է տպագրութեւն ժամանակ. մի քանի՝ որ կարելի է տեսլ, նրան մասամբ անդամաճատել է եւ զրկել որոշ փաստական նկարագրութիւններից:

Գրքում կան նաեւ մի քանի մանր-մունք վերլուծւորներ, որոնք յատուկ տեղ չեն զբաղւում, կամ ստուեր գցում նրա վրայ, որով եւ զանց ենք առնում յիշատակել:

Աշխատութեան վերջում արուած են նաև Իրանից դուրս՝ Մայրագոյն Արեւելքում եւ զան Հայերի մասին Համառօտ տեղեկութիւններ, իսկ վերջում որպէս յաւելում՝ Թաւրիզի եւ Իրանիս - Հնդկաստանի թեմական առաջնորդների անուանացանկը: Սրանց մէջ եւս կան մանր վերլուծւորներ. այսպէս՝ Թաւրիզի թեմակալ առաջնորդների շարքում տեղ են զտել Իրանահնդկաստանի թեմի երկու առաջնորդներ, ինչպէս՝ Յաշատուր Նպս. Վաղարշապատցին եւ Յովհաննէս Նպս. Սուրէնեանը (էջ 335):

Սովորաբար նման պատմական աշխատութիւնների համար կարելուր են յատուկ անոտանց եւ տեղանունների ցանկեր, որից զուրկ է գիրքը:

Աշխատութիւնն իր ամբողջութեան մէջ մի նոր նպատակ է Իրանահայութեան պատմութեան համար: Ընթերցւում է հետաքրքրութեամբ, ուստի եւ անհրաժեշտ ու պիտանի՝ իւրաքանչիւր Իրանահայի համար:

Պարսկաստանի եւ զնահատանքի են արժանի նաեւ գրքի անկորուստ պահողն ու հրատարակողը, ինչպէս եւ ջանադիր խմբագրողը, որի բժախնդիր աշխատանքը նկատելի է անդամ իւրաքանչիւր մի էջի վրայ:

Ինչպէս յիշուած է գրքի նախաբանի, «Երկու Խօսքի» մէջ, Գորոյեանն ունեցել է այլ աշխատութիւններ եւս, որոնցից մէկն եղել է 1828 թուի Թուս-Պարսկական պատերազմի մասին: Մեղ թուաց, որ նման մի ձեռագիր տեսել ենք Նոր-Ջուղայի գրչագրերի մէջ, բայց ձեռագրերի մատենի վրայից ինչքան փնտնեցինք այդ ուղղութեամբ, չլայողեցանք ձեռք բերել: Այս մասին փնտնել անհրաժեշտ է, կազմուած «Ձեռագրացուցակների վրայից եւս կամ ուղղակի ձեռագրերի միջից: